Բառարան

Ազատներ – ավատատիրական հասարակարգում աշխարհիկ և հոգևոր հողատերերից կազմված իշխող դաս, որի եկամտի հիմնական աղբյուրը հողի սեփականությունն է: Հողատեր-ավատատերերի ընդհանուր անվանումը, ազնվականություն:

Աղանդ (աղանդավորներ) – Եկեղեցու պաշտոնապես ընդունված դավանանքից շեղվող կրոնական ուսմունք, ուղղություն:

Անազատներ (ոչ ազնվական) – ավատատիրական հասարակարգում ստորին, հպատակ դաս, որը կազմված էր շինականներից, արհեստավորներից ու առևտրականներից:

Աշխարհաժողով – խորհրդակցական ժողով Հին Հայաստանում, որին մասնակցում էին բդեշխները, նախարարները, հոգևորականները, ազատները, երբեմն՝ շինականները և ռամիկները՝ երկրի առջև ծառացած կարևոր հարցերը քննարկելու համար:

Առաջավոր Ասիա – տարածաշրջան Եվրասիա մայրցամաքում: Հայտնի է նաև որպես Մերձավոր Արևելք:

Առաքյալ – որևէ ուսմունքի, գաղափարի, գործի անձնուրաց, նվիրված գործիչ, քարոզիչ:

Աստիճանակարգություն – պաշտոնատար անձանց ենթակայության և տիտղոսների աստիճանների հաջորդական կարգ Միջնադարյան Հայաստանում:

Աստվածաշունչ – քրիստոնեական կրոնի սրբազան գիրքը:

Աստվածապետություն – պետական կառավարման ձև, որի ժամանակ քաղաքական իշխանությունը պատկանում է հոգևորականությանը:

Ավանդություն – անգիր պատմություն, զրույց, որն անցնում է սերնդեսերունդ:

Ավատ – վասալին տիրոջ շնորհած խոշոր հողային տիրույթ, որը նրանց միջև հարաբերությունների տնտեսական հիմք է ծառայում:

Բաբան – պաշարողական ռազմական գործիք՝ ամրությունների վրա քարեր նետելու կամ ուղղակի հարվածներ հասցնելու համար:

Բազիլիկ (հուն. արքայական տուն) – Եկեղեցու նախնական ձև Հին Հայաստանում, երկու զուգահեռ սյունաշարով երեք մասի բաժանված, ուղղանկյուն դահլիճ:

Բիլինա – ռուսական ժողովրդական ասք-երգ՝ պատմական դեպքերի, դյուցազունների և հերոսների մասին:

Բդեշխ – նահանգների տեր, սահմանակալ նախարար:

Գումակ – փոխադրամիջոցների (սայլախմբերի) ամբողջություն, որով

տեղափոխում էին բանակի պարենը և ռազմական տեխնիկան:

Խույր – ակնեղեններով զարդարված գլխանոց կամ փաթթոց, որ կրում էին թագավորները, բարձրաստիճան իշխանավորները և հոգևորականները:

Կանանոց – Հին Արևելքի երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, արքունիքում թագավորի կանանց բաժանմունք, հարեմ:

Կիրառական արվեստ – արվեստի հատուկ տեսակ, որի խնդիրն է ստեղծել ամենօրյա կյանքի ու կենցաղի առարկաներ, որոնք միաժամանակ գեղարվեստական ստեղծագործություններ են:

Հողաբաժան սահմանաքար – Արտաշես I-ի օրոք գյուղական համայնքներին և մասնավոր տնտեսություններին պատկանող հողերի սահմանները հստակեցնող և բաժանող հատուկ քարեր՝ արամեերեն արձանագրություններով:

Հելլենիստական մշակույթ – տեղական և հունական մշակույթների միահյուսման հիմքի վրա ստեղծված նոր մշակույթ:

Հելլենիզմ – հունականություն, հասարակական կյանքի ամբողջական ընդգրկումով դարաշրջան:

Ճակտոն – շենքի ճակատի վերին եռանկյունաձև կամ շրջանաձև մասը:

Մանրանկարչություն – ձեռագիր մատյանները նկարազարդելու արվեստ Միջնադարյան Հայաստանում:

Մշակույթ – մարդկային հասարակության նյութական և հոգևոր նվաճումների ամբողջությունը:

Նեանդերթալյան մարդ – բանական մարդուն նախորդած մարդու պայմանական գիտական անունը:

«Նեոլիթյան հեղափոխություն» – մարդկանց անցումը յուրացնող տնտեսությունից արտադրող տնտեսության և նստակյաց կյանքի:

Նվիրապետություն – եկեղեցու կրոնական պաշտոնեության աստիճանակարգությունը, հոգևոր աստիճանների ամբողջություն:

Ոստիկան – Արմինիա վարչաքաղաքական միավորի կառավարիչ, կուսակալ:

Շահնշահ – արքայից արքա: Բագրատունի թագավորների տիտղոս՝ սկսած Աշոտ Երկաթից:

Շարական – եկեղեցում արարողությունների ժամանակ կատարվող հոգևոր երգ:

Պատիվ – արքունի գործակալին տրվող հատուկ ժապավեն-կապ, որը նա կրում էր գլխին:

Պրովինցիա – Հին Հռոմի կողմից նվաճված տարածք (երկիր, երկրամաս), որը կառավարում էր հռոմեական փոխարքան:

Պտղի – բնամթերքով եկեղեցուն վճարվող հարկ:

Սատրապ – Աքեմենյան Պարսկաստանի վարչական մեծ միավորների կառավարիչ՝ կուսակալ, ով օժտված էր անսահմանափակ իրավունքներով:

Սատրապություն – վարչական մեծ միավորներ Աքեմենյան Պարսկաստանում:

Սեպագիր արձանագրություն – Առաջավոր Ասիայի հին ժողովուրդների գրային համակարգ՝ քարին կամ կավե սալերին փորագրվող սեպաձև նշանների ամբողջությունը:

Սպարապետ – թագավորական և նախարարական զորքերի ընդհանուր գլխավոր հրամանատարը:

Ստրատեգոս – ռազմավարչական միավորի կառավարիչ:

Վարդապետարան – բարձրագույն տիպի դպրոց Միջնադարյան Հայաստանում:

Տիեզերական ժողով – քրիստոնեական եկեղեցիների բարձրագույն հոգևորականության ներկայացուցիչների մասնակցությամբ գումարված ժողով, որը քննարկում է համաեկեղեցական հարցեր և ընդունում որոշումներ, որոնք պարտադիր են:

Փանդիռ – ժողովրդական եռալար երաժշտական գործիք:

Քաղաքակրթություն – մարդկության հասարակական և մշակութային կյանքի զարգացման մակարդակի բարձր աստիճան:

Քրմապետ – հեթանոսական կրոնի սպասավորների՝ քրմերի ղեկավար, պետ: Հին Հայաստանում քրմապետը թագավորից հետո պետության երկրորդ դեմքն էր: